

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	4
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ-----	12

2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 17

2.1 Ծրագրեր և կատարողականություն -----	17
2.2 Ավևարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	17
2.3 ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ -----	18
2.4 Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ-----	19

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ԶՅ Օրենքներ

Փաստաթուղթ	«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԶՅ օրենք
Ամսաթիվը և համարը	23 հունիսի 2011թ., ԶՕ-223-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 44 (847), 20.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «Հաստատագրված վճարների մասին» ԶՅ օրենքի 60-64-րդ հոդվածների դրույթները (ավտոկանգառների գործունեության համար հաստատագրված վճարների վերա-

բերյալ) չեն տարածվում համայնքի ավագանու որոշմամբ համայնքի սեփականությունը հանդիսացող տարածքներում կազմակերպված ավտոկանգառների վրա:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԶՅ օրենք
Ամսաթիվը և համարը	23 հունիսի 2011թ., ԶՕ-225-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 44 (847), 20.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ «Հարկերի մասին» ԶՅ օրենքի 12-րդ հոդվածից ԶՅ-

ում որպես հարկատեսակ հանվում են տրանսպորտային միջոցների կայանատեղի հարկերը:

Փաստաթուղթ	«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ԶՅ օրենք
Ամսաթիվը և համարը	23 հունիսի 2011թ., ԶՕ-232-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 44 (847), 20.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ այն դեպքում, երբ գրավ դրված գույքը սեփականության իրավունքով անցել է գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը), ապա գրավատուի՝ գույքն օտարելուց ստացված եկամուտ է համարվում գրավ դրված գույքի իրացման գնի (առանց անուղ-

ղակի հարկերի, եթե դրանք կիրառելի են) և վարկային պարտավորության դրական տարբերությունը: Այն դեպքում, երբ բանկի (վարկային կազմակերպության) սեփականությանն անցած գրավադրված գույքը վերջինիս կողմից այդ գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում, կրկին օտարվում է



այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել է բռնագանձումը) կամ նրա իրավահաջորդին, ապա համարվում է, որ գրավատուն գույք չի օտարել (գույքի օտարումից եկամուտ չի ստացել):

Վերոնշյալ դրույթի իմաստով գրավ դրված գույքի իրացման հետևանքով ֆիզիկական անձին եկամուտների վճարման օր և իրացման գին են համարվում՝

1) բանկի (վարկային կազմակերպության) կողմից այդ գույքի հետագա օտարման օրը և օտարման գինը, եթե նման օտարումը տեղի է ունեցել գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում, ընդ որում, եթե գույքն օտարվել է օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գնից ողջամիտ չհամարվող ցածր գնով, ապա գույքի իրացման գին է համարվում օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գինը, կամ

2) գույքն ի սեփականություն վերցնելուն հաջորդող վեցամսյա ժամկետի վերջին օրը և այդ օրվա դրությամբ գույքի շուկայական գինը, եթե այդ վեցամսյա ժամկետում գույքը չի օտարվել, ընդ որում՝ բանկը (վարկային կազմակերպությունը) պարտավոր է իր հաշվին ապահովել գույքի շուկայական գնի որոշումն անկախ գնահատողի կողմից:

Բռնագանձված գույքի նախկին սեփականատիրոջ կամ նրա իրավահաջորդի մասնակցությամբ քաղաքացիական, քրեական, սնանկության կամ վարչական գործի շրջանակներում բանկին (վարկային կազմակերպությանը) ի սեփականություն անցած այդ գույքի վրա արգելանք դրվելու դեպքում վերոնշյալ դրույթով նախատեսված վեցամսյա ժամկետի ընթացքը կասեցվում է արգելանքի տակ գտնվելու ամբողջ ժամկետով:

Բանկը (վարկային կազմակերպությունը) և ֆիզիկական անձ գրավատուն կարող են համաձայնվել, որ վերոնշյալ դրույթի իմաստով գրավ դրված գույքի իրացման հետևանքով գրավատուին եկամուտների վճարման օր և իրացման գին համարվեն այն բանկին (վարկային կազմակերպությանը) ի սեփականություն անցնելու օրը և այդ օրվա դրությամբ անկախ գնահատողի կողմից որոշված շուկայական գինը: Համաձայնությունը կնքվում է հասարակ գրավոր ձևով:

Վերոնշյալ դրույթի իմաստով վարկային պարտավորություն է համարվում գրավ դրված գույքը բանկին (վարկային կազմակերպությանը) ի սեփականություն անցնելու օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորությունը, այդ թվում՝ տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասները, ինչպես նաև գրավ դրված գույքը պահելու, պահպանելու, դրա վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար գրավառուի կատարած կամ կատարվելիք և գրավ դրված գույքի իրացման գնի 15 տոկոսը չգերազանցող ծախսերը:

Գրավ դրված գույքի իրացման գնի որոշման համար «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում հարկային մարմինն օգտվում է նույն հոդվածի երկրորդ պարբերությամբ նախատեսված իրավունքներից:

Վերոնշյալ օրենքը տարածվում է միայն այն գույքի հետ կապված հարաբերությունների վրա, որը գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը) սեփականության իրավունքով անցել է վերոնշյալ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	18 հուլիսի 2011թ, ՀՕ-243-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 45 (848), 27.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը և պլանավորումը:

Միևնույն պետական մարմնի կողմից միևնույն տնտեսավարող սուբյեկտում ստուգումները՝ կախված տնտեսավարող սուբյեկտի ռիսկայնության աստիճանից, իրականացվում են հետևյալ հաճախականությամբ՝

- 1) բարձր ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան տարին 1 անգամ,
- 2) միջին ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան 3 տարին 1 անգամ,
- 3) ցածր ռիսկայնության սուբյեկտների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան 5 տարին 1 անգամ:

Այս մասով սահմանված տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է այն կազմակերպությունների ցանկը, որոնցում, կախված վերջիններիս գործունեության ոլորտի՝ հանրության և պետության համար կենսական նշանակությունից, տվյալ ոլորտը վերահսկող ստուգում իրականացնող պետական մարմինների կողմից ստուգումներ, բացառության կարգով, կարող են իրականացվել վեց ամիսը մեկ անգամ:

1.2 | ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	07 հուլիսի 2011թ, N 934-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 31 (834), 01.06.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշման մեջ կատարված փոփոխության համաձայն՝ օրենքով սահմանված կարգով ՀՀ-ի պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող կազմակերպություններն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում գրանցման ենթակա ՀՀ-ն (ՀՀ-ները) և ՀՀ-ի անձնագիր (անձնագրերը):

Հարկային տեսչությունը ՀՀ-ն և անձնագիրը ստանալուց անմիջապես հետո լրացնում և ստորագրում է ՀՀ-ի գրանցման հայտ՝ համաձայն սահմանված ձևի: Ստորագրված հայտի մեկ օրինակը տրամադրում է ՀՀ-ի պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականաց-

նող կազմակերպությանը: Հարկային տեսչությունը ՀՀ-ի գրանցման հայտն ստորագրելուց անմիջապես հետո կատարում է ՀՀ-ի գրանցում:

Օգտագործվող ՀՀ-ն նորով փոխարինելու դեպքում կազմակերպությունը, նախքան նոր ՀՀ-ի օգտագործումը, հարկային տեսչություն ներկայացնում է նոր ՀՀ-ն, դրա անձնագիրը, փոխարինվող (գրանցումից հանվող) ՀՀ-ն և դրա գրանցման քարտը: Հարկային տեսչությունը վերոնշյալ ՀՀ-ները և փաստաթղթերն անմիջապես ստանալուց հետո լրացնում և ստորագրում է ՀՀ-ի գրանցման հայտ և ստորագրված հայտի մեկ օրինակը տրամադրում



Է ՅԴՄ-ի պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող կազմակերպությանը: Յարկային տեսչությունը ՅԴՄ-ի գրանցման հայտն ստորագրելուց անմիջապես հետո կատարում է ՅԴՄ-ի գանցում և (կամ) գրանցումից հանում

նախկինում գրանցված ՅԴՄ-ն՝ կազմակերպությանը տալով գրանցման նոր քարտ:

Կազմակերպության լուծարման, վերակազմավորման կամ բոլոր այն դեպքերում, երբ տվյալ կազմակերպությունում ՅԴՄ-ն հանվում է օգտագործումից, վերջինս հարկային տեսչություն է ներկայացնում գրանցումից հանելու ենթակա ՅԴՄ-ն: Յարկային տեսչությունը ՅԴՄ-ն գրանցումից հանելու հայտն ստորագրելուց անմիջապես հետո ՅԴՄ-ն հանում է գրանցումից և դրա մասին քարտում կատարում է համապատասխան գրառում, որը հաստատվում է հարկային տեսչության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով:

Որոշման մեջ կատարված լրացմամբ սահմանվում է, որ ՅԴՄ-ի միջոցով հաշվարկներն իրականացնելու համար պատասխանատու անձը պարտավոր է գնորդին, պատվիրատուին տրամադրել դրամարկղային չեկ՝ նաև կանխավճար ստանալու պահին:

Փաստաթուղթ	«Յարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը հարկային մարմիններին ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՅՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	07 հուլիսի 2011թ, N 937-Ն
Յրապարակումը	ՅՅ պաշտոնական տեղեկագիր N 44 (847), 20.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Յամառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը հարկային մարմիններին ներկայացնելու կարգը:

Փաստաթուղթ	«Յայաստանի Յանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի N 520 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՅՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	14 հուլիսի 2011թ, N 964-Ն
Յրապարակումը	ՅՅ պաշտոնական տեղեկագիր N 45 (848), 27.07.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Յամառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած է ճամաչվում Յայաստանի Յանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի «Չկատարված հարկային պարտավորության և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների

պարտավորության դիմաց հարկային մարմնի կողմից հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու և դատարանի վճռից հետո բռնագանձված գույքն իրացնելու կարգը հաստատելու մասին» N 520 որոշումը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N 1504 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	07 հուլիսի 2011թ, N 989-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 46 (849), 03.08.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և կիրառվում է 2011 թվականի հունվարի 1-ից հետո դուրս գրված հարկային հաշիվներն անվավեր ճանաչելու դեպքերում

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ են կատարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի «Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների ձևերի տպագրության, հարկային մարմնից հարկային հա-

շիվների ձեռքբերման, հարկային հաշիվների սերիայի և համարի գներացման կարգերը և հարկային հաշիվների ձևերի գինը սահմանելու մասին» N 1504-Ն որոշման մեջ, որոնցով սահմանվում է դուրս գրված հարկային հաշիվների անվավեր ճանաչման կարգը

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի N 1398-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	21 հուլիսի 2011թ, N 1052-Ն
Հրատարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 47 (850), 10.08.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

1. Որոշմամբ փոփոխություններ են կատարվում ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին Հայաստանի Հանրապետության գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու մասին» N 1398-Ն որոշմամբ հաստատված եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին ՀՀ գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթները կիրառելու մասին կարգում, որոնցով սահմանվում է, որ կարգը կիրառվում է եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության կառավարության անուսից կնքված և գործող միջազգային համաձայնագրերի (այսուհետ՝ համաձայնագիր) անմիջականորեն գործելն ապահովելու և այդ համաձայնագրերի որոշ

դրույթների գործնական կիրառումը կանոնակարգելու նպատակով:

2. Համաձայնագրի համաձայն՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտը Հայաստանի Հանրապետությունում հարկումից ազատված լինելու կամ օրենքով սահմանված հարկի դրույքաչափից տարբերվող (սվազ) դրույքաչափով հարկման կամ միայն եկամուտ ստացողի ռեզիդենտության պետությունում հարկվելու դեպքում ոչ ռեզիդենտը (օտարերկրյա անձը) համաձայնագրի դրույթներից օգտվելու նպատակով հարկային գործակալին ներկայացնում է գործող համաձայնագրի իմաստով այդ պետության ռեզիդենտ հանդիսանալու մասին տեղեկանք, որում պետք է նշված լինի, որ ոչ ռեզիդենտը նշված տարում տվյալ երկրի ռեզիդենտն է՝ Հայաստանի Հանրապետության և տվյալ երկրի միջև կնքված «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին» գործող միջազգային համաձայնագրի համաձայն:

3. | Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից օրենքով փաստացի պահված (գանձված) և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված հարկի գումարի և համաձայնագրով նախատեսված դրույքաչափով պահման (գանձման) ենթակա հարկի գումարի միջև առաջացած դրական տարբերությունը հետ ստանալու նպատակով ոչ ռեզիդենտը (օտարերկրյա անձը) վերադաս հարկային մարմին է ներկայացնում հայաստանյան աղբ-

կանը (ինկորպորացիայի սերտիֆիկատ) կամ քաղվածքն առևտրային ռեեստրից, չեն կարող դիտվել որպես համաձայնագրի իմաստով ռեզիդենտության փաստը հաստատող փաստաթղթեր:

5. | Ոչ ռեզիդենտի կողմից ներկայացված ռեզիդենտության տեղեկանքը գործում (վավերական) է տեղեկանքում նշված ռեզիդենտության տարվա համար և հիմք է այդ տարվա ընթացքում հայաստանյան աղբյուրներից վճարվող



յուրներից ստացված եկամուտներից գանձված հարկերը վերադարձնելու մասին սերտիֆիկատ-դիմումը՝ համաձայն ձևի:

4. | Ռեզիդենտության տեղեկանքը կամ սերտիֆիկատ-դիմումը հաստատվում է միմիայն համաձայնագրի իմաստով իրավասու մարմին հանդիսացող օտարերկրյա պետության ֆինանսական (հարկային) մարմնի կողմից: Դրանք ամրագրվում են համապատասխան ֆինանսական (հարկային) մարմնի կնիքով և իրավասու պաշտոնատար անձի ստորագրությամբ: Այնպիսի փաստաթղթերը, ինչպիսիք են, օրինակ, օտարերկրյա պետության տարածքում գրանցման (հաշվառման) մասին վկայա-

եկամուտներից, համաձայնագրի դրույթների համաձայն, հարկ չպահելու կամ օրենքով սահմանված հարկի դրույքաչափից տարբերվող (սվազ) դրույքաչափով պահելու համար:

6. | Ոչ ռեզիդենտին եկամուտ վճարած հարկային գործակալի մոտ օրենքով սահմանված կարգով իրականացվող՝ ոչ ռեզիդենտին վճարած եկամուտներից առաջացած հարկերի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերության ճշտության ստուգումը փաստացի սկսելուց հետո ներկայացված ստուգվող ժամանակաշրջանին վերաբերող ռեզիդենտության տեղեկանքը հաշվի չի առնվում:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N 1504-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	04 օգոստոսի 2011թ, N 1084-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 48 (851), 17.08.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի «Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների ձևերի տպագրության, հարկային մարմնից հարկային հաշիվների ձեռքբերման, հարկային հաշիվների սերիայի և համարի գներացման կարգերը և հարկային հաշիվների ձևերի գինը սահմանելու մասին» N 1504-Ն որոշման մեջ, որոնցով սահմանվում է, որ Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ կարող են դուրս գրել միայն որպես ԱԱՀ վճարող հաշվառված և հարկային մարմնի հետ համապատասխան ձևի պայմանագիր կնքած անձինք՝ հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված համարվելու օրվանից: Հարկային հաշիվների ձևերը տրամադրվում են հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող

հաշվառված անձանց, ինչպես նաև հարկ վճարողի հաշվառման համար ունեցող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք հարկային հաշիվների ձեռքբերման հայտ ներկայացնում են, եթե նրանք իրականացրել կամ նախատեսում են իրականացնել օրենքի համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարք: Ուժը կորցրած է ճանաչվում որոշմամբ հաստատված N2 հավելվածի 15-րդ կետը, որով սահմանվում էր, որ հարկ վճարողին ավելացված արժեքի հարկ վճարող համարելու հիմքերի բացակայության, ներկայացված գրավոր հիմնավորումն օրենքից չբխելու կամ այդպիսի հիմնավորում չներկայացվելու դեպքում հայտին ընթացք չի տրվում, և հայտի հիման վրա հարկային հաշիվների ձևեր չեն տրամադրվում:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	04 օգոստոսի 2011թ, N 1104-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 48 (851), 17.08.2011թ.
Ուժի մեջ է	2012 թվականի հունվարի 1-ից

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, որով սահմանվում է, որ.

1. Հարկային մարմնում ավելացված արժեքի հարկ (այսուհետ՝ ԱԱՀ) վճարողների հաշվառումն իրականացվում է ԱԱՀ վճարողների հաշվառման համարների հիման վրա:
2. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) համաձայն ԱԱՀ վճարող համարվող անձինք ԱԱՀ վճարող համարվելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարություն: Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին

հայտարարությունը ներկայացվում է թղթային տարբերակով կամ Էլեկտրոնային եղանակով (հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով):

3. Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարությունը ներկայացվում է տվյալ օրացուցային տարվա որևէ ամսաթվից մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտի համար: Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարություն չեն ներկայացնում՝
 - 1) այն անձինք, որոնք ԱԱՀ վճարող են համարվել օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հայտարարության հիման վրա,

2) անհատ ձեռնարկատեր չհամարվող այն ֆիզիկական անձինք, որոնց իրականացրած գործարքներն օրենքի համաձայն համարվում են ապրանքի մատակարարում,

3) այն անձինք, որոնց կողմից նախորդ տարվա համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներում արտացոլված իրականացված գործարքների՝ ԱԱՀ-ով հարկվող ընդհանուր շրջանառությունը գերազանցել է ԱԱՀ-ի շեմը,

4) այն անձինք, որոնց նկատմամբ օրենքի 3-րդ հոդվածի երրորդ մասի «ա», «բ» և «թ» կետերի համաձայն ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում:

քում հարկային մարմինը հարկ վճարողին տրամադրում է հավաստագիր ԱԱՀ վճարող հաշվառելու մասին: Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարությունն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում ԱԱՀ վճարողի հավաստագիրը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է հարկ վճարողին՝ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով: Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հայտարարություն ներկայացրած անձանց հավաստագիր տրամադրվում



4. ԱԱՀ վճարողները համարվում են հաշվառված հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող՝ օրենքի համաձայն ԱԱՀ վճարող համարվելու օրվանից՝ բացառությամբ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարությունը վերոնշյալ կարգի 3-րդ կետում նշված ժամկետից ուշ ներկայացրած անձանց, որոնք հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված են համարվում հայտարարությունը ներկայացնելուն նախորդող 30-րդ օրվանից: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք համարվում են հաշվառված հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքների մասով:

5. Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարությունն ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթաց-

քում հարկային մարմինը հարկ վճարողին տրամադրում է հավաստագիր ԱԱՀ վճարող հաշվառելու մասին: Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարությունն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում ԱԱՀ վճարողի հավաստագիրը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է հարկ վճարողին՝ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով: Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հայտարարություն ներկայացրած անձանց հավաստագիր տրամադրվում

է այդ հայտարարության հիման վրա՝ հայտարարություն ներկայացնելու օրը:

6. Հավաստագրով հաստատվում է, որ հարկ վճարողը հարկային մարմնում հաշվառված է որպես ԱԱՀ վճարող՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարությունում նշված կամ ԱԱՀ վճարող համարվելու օրվանից մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը, իսկ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հայտարարություն ներկայացնելու դեպքում՝ այդ հայտարարությունում նշված օրվանից մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը:

7. ԱԱՀ վճարող չհամարվող անձինք ԱԱՀ վճարողի հաշվառման համարներ չեն կիրառում:

8. ԱԱՀ-ով հարկվող ապրանքներ ձեռք բերելիս կամ ծառայություններ ստանալիս կամ դրա վերաբերյալ պայմանագիր կնքելիս՝

գնորդը կարող է մատակարարից պահանջել ներկայացնել ԱԱՀ վճարող հաշվառելու մասին հավաստագիրը կամ դրա պատճենը:

9. | Հարկային հաշիվ էն համարվում՝

1) ԱԱՀ վճարողի հաշվառման համար չպարունակող հաշվարկային փաստաթղթերը.

2) որպես ԱԱՀ վճարող չհաշվառված կամ ԱԱՀ վճարող չհամարվող անձանց կողմից դուրս գրված՝ ԱԱՀ վճարողի հաշվառման համար պարունակող հաշվարկային այն փաստաթղթերը, որոնցում առանձնացված են ԱԱՀ-ի գումարը և դրույթաչափը:

10. | Հարկային մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրում է հարկ

վճարողի հաշվառման համարներով և կազմակերպության անվանմամբ (անհատ ձեռնարկատիրոջ անունով, ազգանունով) փնտրելու հնարավորությամբ ԱԱՀ վճարող հաշվառված անձանց ցանկը:

11. | ԱԱՀ վճարող անձանց կողմից դուրս գրվող հարկային հաշիվներում, հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկներում, դուրս գրված և ստացված հարկային հաշիվների մասին տեղեկանքում լրացվում է ԱԱՀ վճարողի հաշվառման համարը: ԱԱՀ վճարողի հաշվառման համարը կարող է օգտագործվել այլ փաստաթղթերում (պայմանագիր, ընդունման-հանձնման ակտ և այլն):

Փաստաթուղթ	«Ժամանակավոր ներմուծում» և «Ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմներով ներմուծված (արտահանված) ապրանքների նկատմամբ կիրառված համապատասխան մաքսային ռեժիմի ժամկետների երկարաձգման նպատակով կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի ընտրության և ժամկետների երկարաձգման, 300 միլիոն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի երկարաձգման նպատակով կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի Նոյեմբերի 9-ի N 1934-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի N 600-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	04 օգոստոսի 2011թ, N 1119-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 49 (852), 24.08.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատված «Ժամանակավոր ներմուծում» և «Ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմներով ներմուծված (արտահանված) ապրանքների նկատմամբ կիրառված համապատասխան մաքսային ռեժիմի ժամկետների երկարաձգման նպատակով կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի ընտրության և ժամկետների երկարաձգման կարգով սահմանվում է «Ժամանակավոր ներմուծում», «Ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմներով

(այսուհետ՝ համապատասխան մաքսային ռեժիմ) ապրանքի (ապրանքների) մեկ տարվա-և-ից ավելի ժամկետով բացթողման կարգը:

2. | Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է թույլատրել համապատասխան մաքսային ռեժիմով բաց թողնված ապրանքների մաքսային ռեժիմի ժամկետի երկարաձգումը հետևյալ հիմքերով՝

1) պետության կարիքների, գիտահետազոտական, կրթական, մշակութային, մարդկանց և կենդանիների առողջության պաշտպանությամբ

յան, շրջակա միջավայրի պահպանության.

2) Ներդրումային ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում ներմուծված (արտահանված), ներառյալ ֆինանսական վարձակալությամբ տրված ԱՏԳԱ 84-89-ը ապրանքային ծածկագրերին դասվող ապրանքների համար:

3.) Համապատասխան մաքսային ռեժիմով բաց թողնված ապրանքների համապատասխան ռեժիմի յուրաքանչյուր երկարաձգման ժամկետը չի կարող գերազանցել 3 տարին, իսկ ֆինանսական վարձակալությամբ տրված

վարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի երկարաձգման նպատակով կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի ընտրության» կարգով սահմանվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ անձ) ընտրության չափորոշիչները, որոնց կողմից ներդրումային ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում, 300 մլն դրամը գերազանցող ապրանք-



ԱՏԳԱ 84-89-ը ապրանքային ծածկագրերին դասվող ապրանքների համար՝ ֆինանսական վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը:

4.) Կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ անձ) կարող է դիմել համապատասխան մաքսային ռեժիմի ժամկետը մեկ տարվանից ավելի ժամկետով երկարաձգելու թույլտվություն ստանալու համար, եթե ապրանքն արդեն իսկ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի շրջանակներում գտնվում է Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքում («Ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմի շրջանակներում՝ տարածքից դուրս)՝ ունենալով համապատասխան մաքսային ռեժիմի համար մինչև մեկ տարի ժամկետով թույլտվություն:

Որոշմամբ հաստատված «300 միլիոն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշ-

ների ներմուծման դեպքում՝ սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը կարող է հետաձգվել մինչև երեք տարի ժամկետով:

2.) Հետաձգման թույլտվություն ստանալու համար ապրանքներ ներմուծող անձը գրավոր կամ էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ է ներկայացնում դիմում՝ ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց առնվազն մեկ ամիս առաջ:

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը հաստատելու մասին» N 600-Ն որոշումը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1758-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	25 օգոստոսի 2011թ, N 1236-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 51 (854), 07.09.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվում օրենքով սահմանված չափով ու կարգով որոշվող՝ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի և (կամ) ակցիզային հարկի գումարներն առանց ուսումնասիրության հաշվանցելու և (կամ) վերադարձնելու համար հարկ վճարողներին ռիսկային համարելու չափանիշներում:

1.3 | Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2 հոդվածի համաձայն արգելանք դնելիս գույքի բացակայության, անբավարարության կամ հարկ վճարողի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում արգելանք իրականացնող պաշտոնատար անձի կողմից կազմվող արձանագրության օրինակելի ձևը սահմանելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	21 հունիսի 2011թ, N 1578-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 18 (401), 20.07.2011թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի համաձայն արգելանք դնելիս գույքի բացակայության, անբավարարության կամ հարկ վճարողի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում արգելանք իրականացնող պաշտոնատար անձի կողմից կազմվող արձանագրության օրինակելի ձևը:

Փաստաթուղթ	«Բանկերում բացված առարկայագուրկ մետաղական հաշիվներին եկամուտների ճանաչման և այդ եկամուտների հարկման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	17 մայիսի 2011թ, N22
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 18 (401), 20.07.2011թ.



Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

1. Բանկերում բացված մետաղական հաշիվներից անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց եկամուտները տարբերակվում (առանձնացվում) են ըստ տոկոսների և մետաղական հաշիվներում առկա մնացորդային ոսկու վերագնահատման արդյունքների:

2. Բանկերում բացված մետաղական հաշիվներից ոչ ռեզիդենտ կազմակերպություններին տոկոսների ձևով վճարված եկամուտներից բանկերի կողմից շահութահարկը պահվում (գանձվում) է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված 10% դրույքաչափով՝ անկախ այդ ոչ ռեզիդենտի մետաղական հաշիվներում առկա մնացորդային ոսկու վերագնահատման արդյունքների:

3. Բանկերում բացված մետաղական հաշիվներից անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին տոկոսների ձևով վճարված եկամուտներից

բանկերի կողմից եկամտահարկը պահվում (գանձվում) է՝ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով (եթե եկամուտ ստացող ֆիզիկական անձը հանդիսանում է ՀՀ քաղաքացի) կամ 22-րդ հոդվածի 1-ին կետով (եթե եկամուտ ստացող ֆիզիկական անձը հանդիսանում է օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ) սահմանված 10% դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու օրենքով սահմանված նվազեցումները և անկախ այդ ֆիզիկական անձի մետաղական հաշիվներում առկա մնացորդային ոսկու վերագնահատման արդյունքների:

4. Բանկում բացված մետաղական հաշիվներում առկա մնացորդային ոսկու վերագնահատման տարբերությունները հարկման նպատակով չեն ներառվում տվյալ բանկի և այդ հաշիվները տնօրինող կազմակերպությունների (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ) և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) եկամուտների և (կամ) ծախսերի մեջ:

Փաստաթուղթ	«Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման գործարքների (գործառնությունների) նկատմամբ ավելացված արժեքի հարկի կիրառման հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Ալավերդյանի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	07 հունիսի 2011թ, N 29
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 18 (401), 20.07.2011թ.



Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ սահմանվում է, որ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման գործարքների (գործառնությունների) համար «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 17-րդ կետի համաձայն ԱԱՀ-ից ազատված շրջանառություն է համարվում:

1. Վարկերի տրամադրման դիմաց վճարվող տոկոսային եկամուտը, վարկի տրամադր-

ման պահին միանվագ գանձվող՝ վարկի տրամադրման վճարը, վարկի սպասարկման (այդ թվում՝ մոնիթորինգի) համար որոշակի պարբերականությամբ գանձվող վճարները,

2. վարկային հայտի ուսումնասիրության համար գանձվող վճարը,

3. վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման համար գանձվող վճարը:

Փաստաթուղթ	«Գործունեության դադարեցման դեպքում ռեզիդենտների կողմից շահութահարկի եռամսյակային գումարների վճարման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	13 հունիսի 2011թ, N 30
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 18 (401), 20.07.2011թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ սահմանվում է, որ.

1. Գործունեություն ժամանակավոր (առնվազն՝ մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը) կամ անորոշ ժամկետով չիրականացնելու մասին հայտարարությունը (կամայական

ձևով կազմված) հարկային մարմին գրավոր ներկայացրած և այդ ժամանակահատվածում գործունեություն չիրականացրած ռեզիդենտ կազմակերպությունները՝

■ հայտարարությունը հարկային մարմին

ներկայացնելու եռամսյակից հետո մինչև գործունեությունը վերսկսելու եռամսյակը ընկած ժամանակահատվածների համար շահութահարկի կանխավճարների և նվազագույն շահութահարկի եռամսյակային գումարների վճարումներ չեն կատարում,

■ Եթե հայտարարությունը հարկային մարմին ներկայացրել են մինչև տվյալ եռամսյակի շահութահարկի կանխավճարների և նվազագույն շահութահարկի եռամսյակային գումարների օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետը, ապա այդ եռամսյակի շահութահարկի կանխավճարների և նվազագույն շահութահարկի եռամսյակային գումարների վճարումներ չեն կատարում (անգամ եթե հայտարարության մեջ չի նշվել շահութահարկի կանխավճարներ չկատարելու մասին),

■ Եթե հայտարարությունը ներկայացնելուց հետո գործունեությունը վերսկսվում է տվյալ

եռամսյակի շահութահարկի կանխավճարների և նվազագույն շահութահարկի եռամսյակային գումարների՝ օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետից հետո, ապա այդ եռամսյակի շահութահարկի կանխավճարների և նվազագույն շահութահարկի եռամսյակային գումարների վճարումներ չեն կատարում (անգամ եթե հայտարարության մեջ չի նշվել շահութահարկի կանխավճարներ չկատարելու մասին):

2. | Զարկային տեսչություն գրավոր հայտարարություն ներկայացնելուց հետո ռեզիդենտ կազմակերպության կողմից գործունեություն իրականացնելու դեպքում տույժերը հաշվարկվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով՝ հայտարարությունը ներկայացնելուն հաջորդող առաջիկա կանխավճարային մուծման վճարման վերջնաժամկետից սկսած:

Փաստաթուղթ	«Բանկերի կողմից ոչ ռեզիդենտ կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) պարտատոմսերի դիմաց վճարված եկամուտների (տոկոսների) հարկման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	22 հունիսի 2011թ., N 31
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 18 (401), 20.07.2011թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ բանկերի կողմից ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի դիմաց վճարված եկամուտների

(տոկոսների) հարկումը կատարվում է բանկերի կողմից՝ եկամտի վճարման արժեքի մոտ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան:

Փաստաթուղթ	«Գույքի վարձակալության պայմանագրի շրջանակներում ստացվող եկամուտների հարկման մի քանի հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	22 հունիսի 2011թ., N 32
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 18 (401), 20.07.2011թ.



Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ

1) Այն դեպքում, երբ վարձակալության հանձնված գույքի հիմնական վերանորոգումը կատարվում է վարձակալի կողմից և վերջինս վարձատուից պահանջում է վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին, կամ համապատասխան չափով նվազեցնել վարձավճարը, ապա պահանջվող վերանորոգման արժեքը կամ վարձավճարի նվազեցված մասը վարձակալի մոտ ներառվում է համախառն եկամտի մեջ, որի հաշվառումն իրականացվում է տվյալ հարկ վճարողի (վարձակալի) եկամուտների հաշվառման եղանակին համապատասխան:

2) Այն դեպքում, երբ վարձակալված գույքից վարձակալի կողմից կատարված բաժանելի կամ անբաժանելի բարելավումների դիմաց վարձատուից ստացվում է հատուցում, ապա հատուցման գումարը վարձակալի մոտ ներառվում է համախառն եկամտի մեջ, որի հաշվառումն իրականացվում է տվյալ հարկ վճարողի (վարձակալի) եկամուտների հաշվառման եղանակին համապատասխան:

3) Վարձակալված գույքից վարձակալի կողմից կատարված բաժանելի կամ անբաժանելի բարելավումների չափով նվազեցված մասը (հարկման նպատակով որոշվող մնացորդային գումարը) վարձակալական պայմանագրի փաստացի լուծման դեպքում վարձատուի մոտ ներառվում է համախառն եկամտի մեջ, որի հաշվառումն իրականացվում է տվյալ հարկ վճարողի (վարձատուի) եկամուտների հաշվառման եղանակին համապատասխան:

լի բարելավումների չափորոշիչացված մասը (հարկման նպատակով որոշվող մնացորդային գումարը) վարձակալական պայմանագրի փաստացի լուծման դեպքում վարձատուի մոտ ներառվում է համախառն եկամտի մեջ, որի հաշվառումն իրականացվում է տվյալ հարկ վճարողի (վարձատուի) եկամուտների հաշվառման եղանակին համապատասխան:

4) Պարզաբանման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված եկամուտները հարկային գործակալների կողմից Հայաստանում առանձնացված ստորաբաժանում չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց վճարելու դեպքերում, հարկային գործակալները հարկը պահում են եկամտի վճարման աղբյուրի մոտ՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

5) Պարզաբանման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշված դրույթները կիրառելի են նաև գույքի անհատույց օգտագործման պայմանագրի շրջանակներում կատարված՝ անհատույց օգտագործմանը հանձնված գույքի հիմնական վերանորոգման, բաժանելի կամ անբաժանելի բարելավումների դեպքերում:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի փետրվարի 8-ի N 119-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	20 հուլիսի 2011թ., N 2012-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 21 (404), 01.10.2011թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություն է կատարվում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2010 թվականի փետրվարի 8-ի «Հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով համակարգի ներդրման ժամանակացույցը հաստատելու մասին» N 119-Ն հրամանով հաստատված «Հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով համակարգի ներդրման ժամանակացույցում»:

նակացույցը հաստատելու մասին» N 119-Ն հրամանով հաստատված «Հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով համակարգի ներդրման ժամանակացույցում»:

2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

2.1 | Ծրագրեր և կատարողականություն

2.1.1 | Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/

ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի թիվ 1302-Ն որոշմամբ Հայ-վրացական պետական սահմանի «Բագրատաշեն», «Գոգավան» և «Բավրա» սահմանային անցման կետերի շինարարական աշխատանքների իրականացման նպատակով ստեղծվել է մրցութային հանձնաժողով և հաստատվել դրա անհատական կազմը: Մրցութային հանձնաժողովի նախագահ է նշանակվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահը:

Եվրոպական Հանձնաժողովի կողմից իրականացվող «Հայաստանի սահմանային կետեր» ծրագրի շրջանակներում Շիրակ օդանավակայանը ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման սարքավորումներով վերազինելու նպատակով ապահովվել է մասնակցությունն ս.թ. օգոստոսի 24-26-ը ք.Խսպրայում, Իտալիայի Հանրապետություն, կազմակերպված միջազգային տեղերի աշխատանքներին:



2.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

2.2.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

20.07.2011թ-ից մինչև 20.09.2011թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են

թվով 17 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում թվով 60 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

2.3 ԶՅ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ

Զ/Զ	Ցուցանիշ	Չափման միավոր	2011թ		
			հուլիս	հունվար-հուլիս	Աճի տեմպը Նախորդ տարվա նկատմամբ (հունվար-հուլիս, %)
1	ԶՅ ԿԱ ՊԵԿ կողմից ԶՅ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	69,149.5	443,731.7	109.91
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	56,620.0	360,602.4	109.88
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	30,556.8	179,689.9	111.36
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	6,520.0	63,100.8	129.53
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	7,674.4	45,123.1	109.57
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	1,712.6	12,260.9	146.56
1.1.5	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	1,548.7	11,341.1	92.85
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ԶՅ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,808.2	11,597.8	95.36
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	3,701.5	20,643.6	120.95
1.1.8	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	3,097.9	16,845.3	62.10
1.2	Պետական տուրք	մլն դրամ	1,806.7	11,541.5	108.43
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	10,722.8	71,587.9	110.31
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	155 385	1 088 864	110.5
2.1	Արտահանում	մլն դրամ	44 109	265 034	134.0
2.2	Ներմուծում	մլն դրամ	111 276	823 830	104.8

Զ/Զ	Ցուցանիշ	Չափման միավոր	2011թ		
			օգոստոս	հունվար-օգոստոս	Աճի տեմպը Նախորդ տարվա նկատմամբ (հունվար-օգոստոս, %)
1	ԶՅ ԿԱ ՊԵԿ կողմից ԶՅ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	66,895.8	510,627.5	109.91
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	54,188.4	414,790.8	109.99
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	29,948.9	209,638.8	112.62
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	6,671.9	69,772.7	130.49
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	7,379.9	52,502.9	109.50
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	2,181.7	14,442.6	142.73
1.1.5	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	1,664.2	13,005.2	89.72
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ԶՅ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,905.6	13,503.3	95.82
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	2,876.4	23,520.0	121.83
1.1.8	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	1,559.8	18,405.2	58.37
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,327.2	13,868.7	107.84
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	10,380.1	81,968.0	109.87
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	191 407	1 280 233	112.6
2.1	Արտահանում	մլն դրամ	43 829	308 862	135.0
2.2	Ներմուծում	մլն դրամ	147 578	971 370	107.0

2.4 | Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2011թ. հունվար-հունիս
1.1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝ ֆիզիկական անձ	հատ	926
1.2	Իրավաբանական անձ	հատ	255
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	4 148
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	190
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	1,488,848,573

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2011թ. հունվար-օգոստոս
1.1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝ ֆիզիկական անձ	հատ	629.1
1.2	Իրավաբանական անձ	հատ	302
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	4 561
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	150
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	948,099,127
	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2173
5.1	Բավարարված	հատ	1317
	Մերժված	հատ	54
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	1350
	Բռնագանձման և սնանկության համար ներկայացված հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	2948.6
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	21658
	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	395.9
8	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	2803
	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	8287.7
9	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	68
	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1358.9
10	ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	218
	Ավարտված	հատ	40
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	40
	Կասեցված	հատ	22
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	629.1

ևս մեկ քայլ՝

ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱԶ



եռամսյա պարբերականությամբ
հրատարակվում են
«Հարկատու» և «Մաքսատուն»
ամսագրերը